

Մ Է Ե Տ Ա Բ Ե Բ



«ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1903

ԹԻՒ 10

ՏՂԱՔ ԵՐԲԵՄՆ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՈՐԾԵՆ
Այս երեք պատկերները պատմութիւն մը կ'ընեն որ բոլորովին տխուր չէ: Անոնց մէջ կը տեսնենք նաև տիի մը ծերունի մայրը, կինը և զաւակները: Նաև տին հեռաւոր ծո-



վերը գացած է: Անոր երկարատև բացակայութեան պատճառաւ ընտանիքին ստակը հատաւ. և բաւական կերակուր պէտք է կշտացնելու համար այսպիսի ընտանիքի մը փորը: Անոնք իրենց պատիւին չէին կերցնել մուրալը: Կան աղքատներ որ մուրալէ զատ ուրիշ միջոց չունին իրենց ապրուստը ճարելու: Ասանկներու համար մուրալ յարմար է. բայց եթէ կայ ունէ տեսակ համեստ գործ, հոգ չէ որքան գծուար ալ ըլլայ, որով մարդ մը կամ տղայ մը կըրնայ իր ապրուստը ճարել, և մուրալը աւելի կ'ընտրէ քան գործել, ատիկա նշան է թէ այդ անձը զուրկ է ճշմարիտ մարդավայել նկարագրի: Այս կինները ու տղաքը ընտրած են գծուար գործ մը, բայց այնպիսի գործ՝ որով լաւ կերպով կը ճարեն իրենց ապրուստը: Անոնց տունը Անգղիոյ արևելեան ծովափին մօտ է, և դիտեն թէ իրենց գաւառի կառավարութիւնը որոշ գին մը կը վճարէ շափի վրայ՝ կոտրուած քարերու համար որոնք պիտի գործածուին ճամբաներ շինելու: Քարը առատ է ծովափերը ճիշդ իրենց տան վարը, և անոնք այդ քարերը ստակի կը փոխեն: Առաջին պատկերին մէջ կը տեսնենք զանոնք որ քարեր կը ժողվեն

ծովափերէն. երկրորդին մէջ՝ որ քարերը կը տանին ծովափերէն դէպ ի ճամբան, և երրորդին մէջ կը կտարեն

իրենց մայրը իր կարողութենէն աւելի աշխատի,



զանոնք, Ասոնք երևակայական պատկերներ չեն, այլ արուեստագէտ մը քաջաց զանոնք երբ տեսաւ այդ ընտանիքին այսպիսի գործով զբաղելը, եղան ժամանակներ անտարակոյս երբ այս տղաքն ու աղջիկները յոգնեցան ու ճանճրացան և ուղեցին որ պարսպ միջոց ունենան ուրիշ տղոց հետ միասին խաղալու: Եւ վստահ ենք թէ երբ անոնց հայրը վերադառնայ իր ճամբորդութենէն, ժամանակ պիտի ունենան խաղալու նաև ուսման պարագայերու: Բայց ես շատ գաղափար չունիմ այն տղոց վրայ, որոնք կը թողուն որ

և իրենք անգործ կը պաշտին: Դուք ի՞նչ կը խորհիք անոնց վրայ:

ՀՆԻԿԱՀԱՒԻ ՄԸ ՊՍՏՄՈՒԹԻՒՆԸ

Պարնի, պղնձագոյն խոշոր հնդկահաւ մը, շատ տարօրինակ յատկութեան տէր էր: Իր ձագ եղած ատենը տան տղոց հետ բարեկամացաւ, և բարեկամութիւնը հետզհետէ աւելի զօրացաւ, մինչև որ անոնք անբաժան ընկերներ եղան: Պարնի երբ կը լէր տղոց ձայնը, և կամ կը տեսնէր անոնց գալը, անմիջապէս անոնց քով

կը վաղէր ցնծուն «կոպու կոպու» ներով: Անոնք ուր որ երթային ինք ալ կ'երթար, և անոնց բոլոր խաղերը կը գիտէր ամենամեծ հետաքրքրութեամբ: Եթէ գնդակ խաղային, Պարնի կը ճեմէր գետնին վրայ իբր թէ ինք ալ խաղադրոշմերէն մէկն էր: Եւ այսպէս կ'ընէր տղայոց ամէն խաղերուն առանձնը, և տղոց հանած ամէնէն բարձր աղաղակներուն հաւասար աղաղակ կը հանէր: Եւ ամառուան վերջերը, իր կունները ուրիշ հնդկահաւերուն հանգստանալ երթալէն ժամեր ետքը կը բուռնէին այս ծերուկ հնդկահաւին ձայները տղոց աղաղակի և ծիծաղի ձայներուն հետ: Անիկա կը մնար հոն, մասնակցելով բոլոր խաղերուն և զուարճութիւններուն, մինչև որ իր խաղակից տղաքը անկողին երթալու հրահրուէին, այն ատեն ինք ալ մէկ կողմ կը քալէր դէպ ի բակը և վեր կը թռչէր իր թառը: Զուարճալի էր տեսնել տղոց դէպ ի անտառները երթալը, իրենց հեռունենալով Նիւ Ֆրանսիսի տիւն մը և հնդկահաւը, Պարնի: Այս հաւատարիմ կենդանիները իրենց աչքերը երբեք չզատեցին ամբողջ օրը իրենց մանուկ բարեկամներուն վրայէն, և անոնց հետ մղոններով կը ճամբորդէին դաշտերու վրայէ և մայրաքաղաքը և անտառներու մէջէ: Դունը և հնդկահաւը սերտ բարեկամներ էին, բայց հնդկահաւը մեծ հակակրօններ ունէր շան սեռին դէմ առ հասարակ. և այն վայրկեանին որ օտար շուն մը մտնէր մարդագետինը, սոսկալի հնդկահաւը անոր վրայ կը յարձակէր կատաղաբար: Երբեք չտեսնուեցաւ շուն մը որ ետ չդանայ հնդկահաւին յարձակման առջև: Նմանապէս անիկա սարսափն էր մտակայ օտար տղոց, և կը յարձակէր ունէ մէկուն վրայ որ կը համարձակէր իր դէմքը ցուցնել ճիշդ այնպէս կատաղութիւնով ինչպէս կը հետապնդէր շուններուն: Կիրակի օրերը հնդկահաւը փակուելու էր, եթէ ոչ անշուշտ եկեղեցի կ'երթար տղոց հետ: Անգամ մը յաջողեցաւ երթալ: Քանի մը անգամ փախաւ իր կիրակնօրեայ փակարանէն և գնաց կեցաւ եկեղե-


ցիին ետեւ ցանկապատի մը վրայ, որ մէ իր ձայները հանց, «կոպու կոպու» այնպիսի կերպով մը որ բոլորովին խանդաբեց պաշտամունքը: Խեղճ Պարնին զոհ գնաց թշնամիները հալածելու նախանձին: Օր մը տղի մը վրայ յարձակեցաւ, և տղան ինքզինք պաշտպանելու համար քար մը նետեց և վիրաւորեց անոր գլուխը: Անկէ ետքը հնդկահաւը հիւանդացաւ և շատ յանցած մեռաւ: Մեծ վիշտ զգացին հետը խաղադրոջ տղաքը:



ԲԱՐՁՐԷՆ ԳԱՅՈՂ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ

Հոս կը տեսնուի Նիւ Եորք քաղաքի տեսարաններէն մէկը: Այդ մեծ և բազմամարդ քաղաքին դժուարին խնդիրներէն մին է տեղափոխութեան բաւական միջոցներ գտնել: Հոն կան

կառախումբերուն համար, և մէկը եւ կողներուն համար, երկու կողմերը, այնպէս որ կառախումբերուն բաղադրուած վտանգը չկայ, և ամէն մէկ կենալու տեղ երկու կայարան կայ իրարու դիմաց, ուստի մէկ կողմ դացող ճամբորդները միւս կողմ դացողներուն չեն հանդիպիր: Կառախումբերը քանի մը վայրկեան միայն կը կենան կայարաններուն առջև: Կայարանին անունը կը կանչուի. այն ճամբորդները որոնք հոն պիտի ելլեն, կ'արտօրան կայարան մտնել, և անոնք որ կը սպասեն կայարանը, կառախումբ կը մտնեն և յետոյ առանց սուլելու կամ զանգակ զարնելու, կառախումբը ճամբայ կ'ելլէ: Մենք կ'այցելէինք մեր մէկ աղաղակներին, որ Նիւ Եորքի մէջ տուն մը վարձած էր բարձրէն գացող երկաթուղիներէն մէկուն մօտ, և երկու կողմերէն ալ կառախումբ մը կ'անցնէր ամէն երեք վայրկեանն անգամ մը:



ՍՊԻՆ ԶՅՆՁՈՒԻՐ

Կիրակնօրեայ դպրոցի մը մէկ դասարանին մէջ խօսակցութիւն մը եղած էր ստախոսութեան մեղ-

աչքերը երբեք չզատեցին ամբողջ օրը իրենց մանուկ բարեկամներուն վրայէն, և անոնց հետ մղոններով կը ճամբորդէին դաշտերու վրայէ և մայրաքաղաքը և անտառներու մէջէ: Դունը և հնդկահաւը սերտ բարեկամներ էին, բայց հնդկահաւը մեծ հակակրօններ ունէր շան սեռին դէմ առ հասարակ. և այն վայրկեանին որ օտար շուն մը մտնէր մարդագետինը, սոսկալի հնդկահաւը անոր վրայ կը յարձակէր կատաղաբար: Երբեք չտեսնուեցաւ շուն մը որ ետ չդանայ հնդկահաւին յարձակման առջև: Նմանապէս անիկա սարսափն էր մտակայ օտար տղոց, և կը յարձակէր ունէ մէկուն վրայ որ կը համարձակէր իր դէմքը ցուցնել ճիշդ այնպէս կատաղութիւնով ինչպէս կը հետապնդէր շուններուն: Կիրակի օրերը հնդկահաւը փակուելու էր, եթէ ոչ անշուշտ եկեղեցի կ'երթար տղոց հետ: Անգամ մը յաջողեցաւ երթալ: Քանի մը անգամ փախաւ իր կիրակնօրեայ փակարանէն և գնաց կեցաւ եկեղե-

ցիին վրայ: Վարժուհին, Օրիորդ Եսթեր, քիչ մը լուր թնէ ետքը իր ձեռքերուն վրայ նայեցաւ: Զախ ձեռքի ցուցամասին վրայ երկար ճերմակ սպի (վէրքի նշան) մը կար զոր ցուցուց վարժուհին աշակերաններուն: «Այս մասս կարեցի երբ պղտիկ աղջիկ մըն էի, եղբօրս զմեկինին հետ խաղալու ժամանակ: Կտրուածքը խորունկ էր, և թէպէտ վերքը շուտով աղէկցաւ, բայց սպին մնաց: Միշտ պիտի մնայ հոն: Իմ իմաստուն փոքրիկ աղջիկներս, որոնք բնախօսութիւն կարդացած են, գիտեն ատիկա, և գիտեն պատճառն ալ:» Ամբողջ դասը իր ժպիտներով պատասխանեց Օրիորդ Եսթերի զուարթ դէմքին: Յետոյ վարժուհին զուարթութեան յաջողեց լրջութիւն մը և, «Հիմա կը կարծեմ թէ», ըսաւ, «ամէն մէկ սուտ զոր կը խօսինք, սպի մը կը թողու մեր հոգիին վրայ, որ, եթէ կարելի ըլլար հոգիները տեսնել, անոնց վրայ պիտի տեսնուէր ինչպէս կը տեսնուի մատիս վրայի այս նշանը:


քին վրայ: Վարժուհին, Օրիորդ Եսթեր, քիչ մը լուր թնէ ետքը իր ձեռքերուն վրայ նայեցաւ: Զախ ձեռքի ցուցամասին վրայ երկար ճերմակ սպի (վէրքի նշան) մը կար զոր ցուցուց վարժուհին աշակերաններուն: «Այս մասս կարեցի երբ պղտիկ աղջիկ մըն էի, եղբօրս զմեկինին հետ խաղալու ժամանակ: Կտրուածքը խորունկ էր, և թէպէտ վերքը շուտով աղէկցաւ, բայց սպին մնաց: Միշտ պիտի մնայ հոն: Իմ իմաստուն փոքրիկ աղջիկներս, որոնք բնախօսութիւն կարդացած են, գիտեն ատիկա, և գիտեն պատճառն ալ:» Ամբողջ դասը իր ժպիտներով պատասխանեց Օրիորդ Եսթերի զուարթ դէմքին: Յետոյ վարժուհին զուարթութեան յաջողեց լրջութիւն մը և, «Հիմա կը կարծեմ թէ», ըսաւ, «ամէն մէկ սուտ զոր կը խօսինք, սպի մը կը թողու մեր հոգիին վրայ, որ, եթէ կարելի ըլլար հոգիները տեսնել, անոնց վրայ պիտի տեսնուէր ինչպէս կը տեսնուի մատիս վրայի այս նշանը:

Երանի՜ թէ կարող ըլլայի այսօր ձեր վրայ տպաւորել մինչև անգամ մէկ սուտ խօսելուն վառնողը և յիմարութիւնը: Անոր յիշատակը մնայուն սպի մը կը թողու: Ես գիտեմ՝ ասիկա, վասն զի գլուխս եկած է և փորձառու եմ:”

Տղոց աչքերը խորոցան և բուրբակցան: Մտածել թէ իրենց սիրելի վարժուհին սուտ խօսի, անկարելի է այդ: «Ատիկա պզտիկ և աննշան բան մըն է՝ պիտի ըսեն թերևս ոմանք,» շարունակեց վարժուհին, «բայց ես երբեք այդպէս չեմ գգար: Երբ փոքրիկ աղջիկ մըն էի, ձեր ունէ մէկէն պզտիկ, մօրս սուտ մը դրուցեցի: Չամիչ շատ կը սիրէի, և ան ինձի ամի մը լեցուն չամիչ կու տար յաճախ երբ կերակուր կ'եփէր, ըսելով նաև թէ չհամարձակիր աւելի տալ, վասն զի չամիչ ուտելը շատ ապահով չէր պզտիկ աղջիկներու համար: Օր մը մայրս դուրս թողուց չամիչին տուփը և, երբ սենեակէն դուրս կը գրանուէր, անկէ առի շատ մը: Գիտէի թէ ծուռ էր ըրածս, և խիղճս բաւական կը տանջէր զիս, երբ գաղտուկ գաղտուկ կ'ուտէի անկիւն մը քաշուած մօրս աչքէն: Արդ, այնպէս պատահեցաւ որ մէկ երկու օր ետքը մայրս ուզեց լուալ այդ առաւօտ հագած փոքրիկ հանգերձս, և անոր գրպանին ներսը դուրս դարձուց: Ես մօրս քով կայնած էի այդ ատեն և ձեռքէն առի կապարեայ գրիչներու, դերձաններու, դամբրու, կոճակներու, գայլախաղ քարերու և ներկուած թուղթի կտորներու խառնուրդը: «Սիրելիս, ի՞նչպէս կ'ըլլայ որ այսչափ չամիչի կուտ կը գտնուի գրպանիդ մէջ,՝ ըսաւ: Ահա պատահութիւն մը յանցանքս խոստովանելու: Բայց, ո՛հ, այնքան ամացայ որ ինձի թուեցաւ թէ պիտի չկրնամ խոստովանել: Գիտէք որ ինձի շատ մը չամիչ տուիր, մայր՝ ըսի, և այդ ատեն խօսեցայ սուտս: Կը խորհի՞ք թէ տեսաւ զայն իմ դէմքիս վրայ: Երկար նայուածք մը ձգեց երեսիս վրայ, բայց բան մը չըսաւ ոչ այն ատեն, ոչ յետոյ: Ես ալ երբեք բան մը չըսի անոր վրայ, մինչև իսկ երբ մեծցայ և չափահաս աղջիկ մը եղայ: Ե մարդ կրնայ խորհիլ թէ մտացայ զանիկա: Հիմա մայրս քովս չէ: Տարիներ առաջ անոր աղնի հոգին Աստուծոյ գնաց. բայց այդ բանը ճիշդ երէկ պատահածի պէս կը յիշեմ. սիրտս կը ցաւի երբ միտքս կու գայ թէ ի՞նչպէս անգամ մը սուտ

խօսեցայ անոր, և այդ սուտին յիշատակը կու գայ իմ և մօրս դէմքին մէջտեղ: Անիկա ապրող հոգիներուն ամէնէն աղնիւներէն մէկն էր, և մէկ խոստովանութիւնս բաւական պիտի ըլլար ներում ընդունելու, գիտեմ, բայց երբեք չխոստովանեցայ անոր, և հիմա երբեք չեմ կրնար խոստովանիլ մինչև որ նորէն չտեսնենք իրար: Կը յուսամ թէ շատ պիտի չլշտանայ երբ լսէ, բայց կը վախնամ թէ պիտի վշտանայ: Ուրեմն կը տեսնէք, աղջիկներ, թէ եթէ կ'ուզենք ապագային մէջ թշուառ չըլլայ, պէտք է որ զգուշանանք ստախօսութենէ: Երանի՜ թէ ձեզմէ ոչ մէկը յիշէր...»


Ճիշդ այդ ատեն վերատեսուչը զանգուկը դարկաւ, և Օրփորդը Եսթեր խօսքը կտրեց, կիսկատար թողուց, և տասը փոքրիկ երեսներ շատ լուրջ կերպարան մը առին:



ԿՈՎՈՐԻՒՆՈՍ

Ի՞նչ ազեղ գլուխ: Եթէ մարդ անգամ մը փակուի այդ հոգը ծնօտներուն մէջ, և այդ սուր ակունները մտնեն անոր մտին մէջ, ա՛լ յոյս չկայ: Կոկորդիլոսները երբեմն վարպետութիւն կը բանեցնեն իրենց որսը բռնելու ատեն: Կը նմանին իայտի կոճղի որ կը տարուբերի ջրին մէջ և անշարժ կը մնան մինչև որ որսը բաւական մօտ գայ, և այն ատեն յանկարծ նետուելով կը բռնեն զանիկա: Կը պառկին ջուրին մէջ, և կը բռնեն կենդանիներ երբ անոնք կու գան ջուր խմել, երբեմն ալ ջրեղը կը պառկին բերանին բաց թողելով, որուն մէջ թռչուններ կը մտնեն, այն ատեն բերանը կը գոցուի և թռչունները ներսը կը մնան: Անգամ մը կարդացի՞ք նաւաստիի մը վրայով, որ ծովեղբրը լողալու ելաւ իր նաւէն: Նաւը խարխիս նետած էր ծովածոցի մը կամ գետի մը մէջ, և երբ անիկա դեռ հասած չէր ջրեղը, անոր նաւաստի ընկերները նաւէն տեսան կոկորդիլոսը որ արագ արագ կը լողար դէպ է նաւաստին: Անոնք աղաղակեցին սուկումով, և լողացողը կրկնապատկեց իր ջանքը: Բայց սրբնթաց կոկորդիլոսը անշուշտ պիտի հասնէր մարդուն, եթէ անոր մօտեցած ատեն անտառներով ծածկուած ջրեղին վագր մը դուրս ցատկելով չյարձակէր զայն բռնելու համար: Գաղանը շատ հեռուն ցատկեց և կոկորդիլոսին բերանը խնկեց: Եստուծոյ խօսքէն օրինակներ զնեկ իր գրպաններուն մէջ, և Սպանիական երկիրը անցնելով տարածել զանոնք ժողովրդին մէջ, որոնք ուրախութեամբ կ'ընդունէին զանոնք իր այս պտոյտներէն մէկուն մէջ այցելեց կոչկակարի մը տուն, և մարդուն հետ շահեկան խօսակցութիւն մը ունեցաւ. անկէ իմացաւ թէ Սպանիացիներ անոր տան մէջ ժողով մը կ'ուներ նային շարաթն անգամ մը հանրային գործերու և երկրին վիճակին վրայ խօսակցելու համար: Եւ երբ կոչկակարը խոստովանեցաւ թէ այս խօսակցութիւններն ու հակաճառութիւնները երբեք շատ օգտակար եղած չէին, այցիլու պաշտօնեան ըսաւ, «Ի՞նչ պէտք է որ Աստուածաշունչն առնէք, և զանիկա կարդաք. անիկա աւելի օգտակար պիտի ըլլայ ձեզի:» «Ո՛հ,» պատասխանեց կոչկակարը, «երանի՜ թէ հատ մը ունենայի, բայց մեր քահանաները չեն թողուր որ Աստուածաշունչ ունենանք:» Մեծ եղաւ մարդուն ուրախութիւնը երբ իրեն Աստուածաշունչ մը նուիրեց պաշտօնեան, որ ըսաւ նաև թէ «Եթէ ձեր բարեկամները կ'ուզեն Աստուածաշունչ, երբ գաք ձևարարութեամբ, այսինչ տունը, ուրիշներ ալ կրնաք ստանալ:» Գանի մը շարաթն ետքը Սպանիացի մը իր պա-

լուր անշուշտ պիտի հասնէր մարդուն, եթէ անոր մօտեցած ատեն անտառներով ծածկուած ջրեղին վագր մը դուրս ցատկելով չյարձակէր զայն բռնելու համար: Գաղանը շատ հեռուն ցատկեց և կոկորդիլոսին բերանը խնկաւ, և մարդը իր երկութիւններուն կռուին մէջտեղ վախաւ աղաատուեցաւ:



ԿՈՇԿԱԿԱՐԻՆ ԵՐԱՒՍԱԿԻՏՈՒԹԻՒՆԸ
Սպանիա վերջին տարիներուս մէջ միայն թոյլտուութիւն ստացած է բաց Աստուածաշունչ ունենալ, վասն զի 1868 էն առաջ անիկա գրեթէ անծանօթ գերք մըն էր ժողովրդին մէջ. անոր շրջաբերութիւնը արգելուած էր իշխանութիւններուն կողմէն: Այդ խաւար ժամանակներու միջոցին Սկովտացի երիցական պաշտօնեայ մը իր առողջութիւնը դարմանելու համար ձեռնարկեց գնաց, ուր, թէպէտ Սպանիոյ մէջ է այդ քաղաքը, բայց Բրիտանական իշխանութեան ներքեւ ըլլալուն համար, Աստուածաշունչ Բնկերութիւնը միջերանոց մը ունէր: Մինչ բաւական երկար ժամանակ կը պտրտէր այս բարի մարդը, սովորութիւն ունէր շատ անգամ Աստուծոյ խօսքէն օրինակներ զնեկ իր գրպաններուն մէջ, և Սպանիական երկիրը անցնելով տարածել զանոնք ժողովրդին մէջ, որոնք ուրախութեամբ կ'ընդունէին զանոնք իր այս պտոյտներէն մէկուն մէջ այցելեց կոչկակարի մը տուն, և մարդուն հետ շահեկան խօսակցութիւն մը ունեցաւ. անկէ իմացաւ թէ Սպանիացիներ անոր տան մէջ ժողով մը կ'ուներ նային շարաթն անգամ մը հանրային գործերու և երկրին վիճակին վրայ խօսակցելու համար: Եւ երբ կոչկակարը խոստովանեցաւ թէ այս խօսակցութիւններն ու հակաճառութիւնները երբեք շատ օգտակար եղած չէին, այցիլու պաշտօնեան ըսաւ, «Ի՞նչ պէտք է որ Աստուածաշունչն առնէք, և զանիկա կարդաք. անիկա աւելի օգտակար պիտի ըլլայ ձեզի:» «Ո՛հ,» պատասխանեց կոչկակարը, «երանի՜ թէ հատ մը ունենայի, բայց մեր քահանաները չեն թողուր որ Աստուածաշունչ ունենանք:» Մեծ եղաւ մարդուն ուրախութիւնը երբ իրեն Աստուածաշունչ մը նուիրեց պաշտօնեան, որ ըսաւ նաև թէ «Եթէ ձեր բարեկամները կ'ուզեն Աստուածաշունչ, երբ գաք ձևարարութեամբ, այսինչ տունը, ուրիշներ ալ կրնաք ստանալ:» Գանի մը շարաթն ետքը Սպանիացի մը իր պա-

հետի հանդերձները հագած զարկաւ քարոզչին բնակած տանը դուռը, շատ փափաք յայտնեց զանիկա տեսնել, և անոր սենեակը առաջնորդուեցաւ: Շուտով ճանչցուց ինքզինք թէ այն կոչկակարն է որ ընդունած էր Աստուածաշունչը. ըսաւ թէ զանիկա կանոնաւոր կերպով կը կարդային իրենց շաբաթական ժողովներուն մէջ, և թէ իր բարեկամները շատ կը փափաքէին Աստուածաշունչներ ստանալ, և ինք եկած էր ուրիշներ ալ խնդրել: Կոչկակարին խնդիրքը յօժարութեամբ ընդունուեցաւ, և գիրքերը տրուեցան: Ասոր վրայ մարդը իր թեկն տակէն ծրար մը հանեց ու ըսաւ, «Ես իմ երախտագիտութեան փոքր մէկ նշանը բերի ձեզի, զոր կը յուսամ թէ պիտի ընդունիք: Համարձակեցայ ձեզի զոյգ մը կոչիկ շինել:» «Շատ բարեօրտ էք», ըսաւ բարի պաշտօնեան, «բայց եթէ յարմար չդայ՝ ոտքիս, և անօգուտ ըլլայ ինձի:» «Փորձեցէք, տէր, հագէք անգամ մը», ըսաւ կոչկակարը, «վասն զի կը կարծեմ թէ ճիշդ ձեր ոտքերուն յարմար պիտի գտնէք զանոնք:» Քարոզիչը փորձն ըրաւ, և ահա կոչիկները ճիշդ եկան անոր ոտքերուն: Երբ պաշտօնեան հարցուց կոչկակարին թէ ինչպէս գիտցաւ իր ոտքին ճիշդ չափը, սա պատասխանեց, «Գիտէի թէ երբ դուք իմ տունէս մեկնեցաք, կակուղ հողի մը վրայէն անցաք, ուստի ձեր ետեկէն քայլեցի, և ձեր ոտքերուն հետքերէն առի չափը, և այսպէս կարող եղայ շինել կոչիկները զորոնք միաքս գրի ձեզի բերել: Կը յուսամ թէ պիտի հաղնիք զանոնք, իբրև նշան երախտագիտութեան Սպանիացի աղքատիկ կոչկակարէ մը այն պատուական Աստուածաշունչին համար զոր տուիք անոր:»

ՏՂԱՔ՝ ԱՅՈՂ ՆԱԻՒ ՄԸ ՄԷՋ

Լոնտոնի զանազան գործատուներէն հինգ հարիւր տղաք դրուեցան Կոլմբի նաւ դպրոցին մէջ նաւաստի ըլլալու համար: Այս մեծ նաւը յանկարծ կրակ առաւ ձմեռ առաւօտ մը ժամը ութին ատենները (ը. Ե.): Հազիւ լուսցած էր: Երեք վայրկեանի մէջ նաւը բոցերով պաշարուեցաւ մէկ ծայրէն միւսը, և հրդեհի զանգակը հնչեց ամէն տղայ իր տեղը հրաւիրելու համար: Ինչ ըրին անոնք: Լացին, ճչեցին կամ փախան խառնխուռն: Ոչ, ամէն մէկը իր յատուկ տեղը վազեց: Տղաք կը թռուած էին

այդպէս ընել, և ոչ մէկը մոռցաւ ինքզինք, ոչ ալ շփոթեցաւ, այլ ամէնն ալ վարուեցան մարդու պէս: Յետոյ երբ անկարելի եղաւ նաւը ազատել, անոնք որ կրնային լողալ, նաւին հրամանատարին հրամանին վրայ ջուրը նետուեցան լողալով իրենց կեանքերն ազատելու համար: Ոմանք հրամանատարին հրամանով նաւակ մտան. և երբ բոցի և ծուխի ամպերը նաւէն անոնց վրայ եկան, աւելի փոքր տղաքը վայրկեան մը սարսափեցան և կ'ուզէին հեռանալ նաւակովը: Բայց անոնց մէջ կար մէկը, փոքրիկ նաւաստին Ռիլերմ Պոլթըն, հանգարտ տղայ մը, շատ սիրելի իր ընկերներուն, որ զգացում և քաջութիւնն ունեցաւ ըսել, «Ոչ, պէտք է որ կեանք և օգնենք անոնց որ տակաւին չողենաւին մէջ են:» Նաւակը Կոլմբիին կուշտը պահեց որքան երկար ատեն որ կարելի էր, և այսպէս միջոց եղաւ հարիւրէ աւելի կեանքերու ազատուելուն: Եւ ուրիշներ կը գտնուէին որոնք տակաւին չողենաւին մէջ կը մնային մինչ բոցերը կը ծաւալէին: Անոնք կը կայնէին հրամանատարին քով որ այնքան քաղցրութեամբ վարուած էր անոնց ամէն մէկուն հետ և շատ սիրելի էր անոնց ամէն մէկուն: Այդ ստակալի վայրկեանին անոնք աւելի կը մտածէին անոր քան իրենց անձեւուն վրայ. անոնցմէ մէկը անոր վիզը փաթթուեցաւ և ըսաւ, «Պիտի այրիք, հրամանատար», և ուրիշ մը ըսաւ, «Ինքզինքդ ազատէ, հրամանատար:» Բայց հրամանատարն ըսաւ, «Ոչ, տղաք, այդ չէ կերպը ծովու վրայ:» Ըսել ուզեց թէ ծովուն վրայի կերպն է առաջուրէն պատրաստուիլ վտանգի, առնաբար գիմագրաւել աւնոր երբ կու գայ, և նայիլ ոչ անձին միայն ապահովութեան, այլ ուրիշներուն:

Անգամ մը դպրոցի վարժապետ մը աղաւթեց իր աշակերտները հրդեհուած տան մը վտանգէն. զանոնք կարգաւ շարեւղով և նուազածութեամբ տանելով ապահով տեղ մը: Մեծ բան է կրթուիլ և սորվիլ հրամաններու հնազանդիլ և «պազարիւն կենալ:»

ԱԶԻԵՅՈՎ ԲԵՐԱՆԱԿՈՒ ՄԸ

Հետագայ պատմութիւնը շատ կը սիրէր պատմել Նիւ Եորքի վաճառական մը որ հիմա մեռած է. Ես անգամ մը որսորդութեան ելայ, իմ քանի մը բարեկամներու հետ, կ'ըսէր, և այն դաշտին մէջ որ կից էր տանը ուր կը պառկէինք, էջ

մը կ'արածուէր: Կենդանիին զուարճայնէն չէինք կրնար քնանալ գիշերները: Բարեկամներս ինչ որ ըրին չկրցին լուեցնել էջը: Ես շատ տեղեկութիւններ ստացած եմ էջերու վրայ: Անոնցմէ շատ կը գտնուին մեր փողէն գաւառին մէջ: Ուստի ըսի բարեկամներուս թէ «Ես կրնամ դադարեցնել այդ կենդանիին ձայնը, այնպէս որ այս գիշեր մէկ անգամ իսկ չըլտայ:» Անոնք չհաւատացին ըսածիս. բայց այդ իրիկուն իշուն բան մը ըրի իր տուած ձանձրոյթին համար: Կենդանին լուս կեցաւ ամբողջ գիշերը, Հետեւալ առաւօտ բարեկամներս ըսին թէ կ'ուզեն տեսնել էջը և այն ատեն պիտի հաւատան: Կը սպասէին թէ մեռած պիտի գտնեն զանիկա: Բայց ողջ գտան: Իշուն պոչը քար մը կապուած էր: Ահա այս էր ամէնը: Անոնք չէին կրնար հասկնալ թէ էջը ինչպէս արգելուած էր զուլէ, և ինդրեցին որ բացատրեմ: «Կատարելապէս պարզ է», ըսի, «ուեկ մեկուն համար որ ստամոսիքած է էջը: Կենդանին երբեք չըլտար առանց իր պոչը վերցնելու իր մարմնին բարձրութեամբ: Որչափ ատեն որ զանիկա վար կը կախէ, ձայն չհաներ: Ուստի իմ ծանր քարս ծառայեց իբրև բերանակապ:»



ՄՍԻՒ ՄԷՋ ՄՏԱՎ Ե

Փոքրիկ կարուս շատ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր երբ իր հայրը ընտանեկան պաշտօնի ատեն կը կարգար Յայտնութեան Գ. գլուխը: Բայց երբ հայրը կրկնեց այն գեղեցիկ համարը. «Ահա ես դուռը կայներ եմ ու կը զարնեմ. եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մանուկ և անոր հետ ընթրիք պիտի ընեմ. ան այլ իմ հետս:» չկրցաւ սպասել մինչև իր հօր ընցնելը, այլ անոր վաղեց և հարցուց փափաքով, «Հայրիկ, մտած է:» Ես կ'ուզեմ նոյն հարցումը ընել ամէն մէկ տղի, «Փոքրիկիչը սքաիդ մէջ մտած է: Ան կրկին և կրկին անգամ զարկած է դուռը, հիմա ալ կը զարնէ: Բացէք ձեր դուռները և սիրով ընդունեցէք զանիկա, և այս պիտի ըլլայ ձեր կեանքին ամէնէն երջանիկ օրը:»

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղոյ համար:

Ամերիկայի Միտինսթրայ Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Ք. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՏ
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՌՔ ՊՅՈՅՅԱՆ
Ֆինանսըլար Եօզուշու, Ամերիկան Խաճ